

Ուսումնասիրել եմ Քեմալի գործունեությունն ու կենսագրությունը և մի բան կարող եմ հաստատ ասել. նրա խոշորության գաղտնիքը մաքրագույն և անհիստ լինելն է: Թուրքական և անգլիական չի տապալվել. հետևողականորեն սուլթանի և թուրք պետական գործիչների իրենց տեսակետից «Իմաստուն ու խելոք» բաղաբառակազմությամբ նույնն են արել. հայ պետականության բացառումը ...

Աղբյուրների լիզեր մտավորականները հենց առաջին օրերից, որպես հավատարիմ ժառանգորդներ, հեշտությամբ սկսեցին առաջնորդվել Քեմալ Աթաթուրքի արձանագրություններով՝ երկրի անբաժանելիության, այլ էլեմենտը բացառելու և այլևի մասին: Գիտելի. պատմության մեջ փորձված բան է՝ ոչ ոք էլ տեր չի կանգնելու զոհերին: Նույն «սքանչելի», «փայլուն», «հաջողված» այդ սցենարը ձեռքներին այն ժամանակվանից եկել ու այդպես էլ գնում են...

ՀՐԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱԼ

Հիմնադրվել է 15 ապրիլի 2021թ. № 7 (549)

ՀԻՄՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32: (+374 285) 5 25 63 (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47 syuniacyerkir@mail.ru



# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Գարեգին Նժդեհի հուշարձանը Կապանում

## Մեր լինելիության բանաձևերը. երբ Սյունիքն այլևս այն չէ, ինչ էր կապիտուլյացիայից առաջ

**Հինգ ամիս առաջ լույս աշխարհ եկած հայտնի կապիտուլյացիոն ակտը, գոնե այս փուլում, վերջ դրեց Արցախյան 44-օրյա պատերազմին...**

Սակայն թնդանդների լուրջությունը տարածաշրջանին չբերեց որոշակիություն, հուսալի կայունություն եւ կանխատեսելի ակազա: Ընդհակառակը՝ Արցախի համար թուրք-ազերիների պայքարը փոխարինվեց Սյունիքի համար պայքարով, որն այս փուլում ընթանում է անաղմուկ, սողացող դրսևորումներով...

Այդ, այստեղ առաջին թնդանդները չեն որոտում, բայց աստիճանաբար ու հետևողա-

կանորեն լուծվում են այն հարցերը (ի վնաս Հայաստանի), որոնք սովորաբար լուծվում են մարտադաշտում...

\*\*\*

Մի բանի օր առաջ Աղբյուրների նախագահ Իլիամ Ալիեյը հերթական անգամ շանգեզուրի անհավուր պահանջներ ներկայացրեց՝ մեր երկրամասն անվանելով «Աղբյուրների հիմնական հող»:

Նրա խոսքով՝ «...Ակտիվ աշխատանքներ են տարվում շանգեզուրի միջանցքի հետ կապված»:

Այժմ Աղբյուրների հիմնական հողը՝ շանգեզուրը, թուրքական աշխարհը միավորելու դեր կկատարի: Զանի որ տրանսպորտային, հա-

ղորդակցական, ենթակառուցվածքային նախագծերը, որոնք անցնում են շանգեզուրով, կմիավորեն ամբողջ թուրքական աշխարհը, ինչպես նաև լրացուցիչ հնարավորություններ կստեղծեն այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար:

...Աղբյուրներն արդեն տվել է այդ աշխատանքների մեկնարկը: Վստահ եմ, որ գործընկեր երկրները նույնպես կօգտվեն այս հնարավորությունից:

...Այժմ չկա «Լեռնային Ղարաբաղ» կոչվող տարածքային միավորը: Աղբյուրները լուծել է այս հարցը, հասել է պատմական հաղթանակի եւ սկսել է վերականգնման աշխատանքներն Շարունակությունը՝ էջ 3

## Նռնածորում կառուցվում է նոր թաղամաս Արցախից տեղահանվածների համար

«Սենք նախատեսում ենք այս ծրագիրը հանրայնացնել, իրագրելու մասին արշավ իրականացնել, որ աջակիցների շրջանակն ընդլայնվի: Նախնական տվյալներով՝ մայիսի սկզբին նախատեսում ենք կատարել ծրագրի բացումը, կլինի առաջին տների հիմնարկների արարողությունը: Իրագրելու մասին արշավի շրջանակում բարոզական ակտիվ աշխատանք ենք կատարելու, որպեսզի շատերը տեղյակ լինեն ու 1000 դրամից սկսած յուրաքանչյուրը ցանկության դեպքում աջակցի», – ասաց Արմեն Սաբապետյանը:

Խոսելով նախապատրաստական աշխատանքների մասին՝ նա նշեց, որ տարածքը շատ ավերակ վիճակում էր, մեծածավալ

հողային, հարթեցման աշխատանքներ են իրականացվել մոտ 3 հա տարածքում: Նախապատրաստվել է ամբողջ թաղամասի շինարարական: Արդեն սկսվել է առաջին երկու տների կառուցումը: Առաջին փուլում նախատեսվում է կառուցել 30 տուն: Ընտրվելու են բացառապես այն ընտանիքները, որոնք երիտասարդ են, բազմազավակ են: Տները կառուցվում են 5-6 հոգանոց ընտանիքների համար:

«Շեշտը դրել ենք Արցախից տեղահանված, սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանիքների վրա: Նախատեսում ենք սկզբում գոնե 200 բնակչի տեղավորում: Արդյունքում, դպրոցում շարժ կլինի, առաջ կգա մանկավարժներով տեղի դպրոցը հա-

մայրելու հնարավորություն, տրանսպորտի հարցի կարգավորում: Այսինքն՝ ենթակառուցվածքները պետք է բարելավվեն», – ասաց նա՝ ընդգծելով, որ ճանապարհների հետ կապված նույնպես խնդիր կա: Պայմաններն այնպիսին են, որ հողային աշխատանքների համար նախատեսված տեխնիկական շատ մեծ բարդություններով են տեղավորվել:

Արմեն Սաբապետյանի խոսքով՝ Նռնածորը՝ հարավարևելյան ուղղության առաջին սահմանակից գյուղը, փորձում են վերականգնել, այնտեղ աշխուժություն մտցնել:

Նռնածորում ազատ հող չի մնացել: Կառավարության որոշմամբ Դատապարտյալների հիմնադրամին տարիներ առաջ հատկացվել է ժամանակավոր օգտագործման իրավունքով մոտ 140 հա հողատարածք, որը, ըստ եղբայրների, այսօր չի մշակվում: Խնդիր է դրված հողի օգտագործման իրավունք ստանալ: Նա նշեց, որ նախատեսում են այդ հողերը տրամադրել

Շարունակությունը՝ էջ 2

### ՈՒՐԻՇ ՀՆԱՐ ԶԿԱ

- Պատը շարվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Պարտքը մարվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Նախնյաց սուրբ հավատի
- Մասունքների դիմաց
- Ծունկը ծալվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Եթե սիրտդ սիրտ է,
- Սիրո ճամփի վրա
- Խելագարվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Հոգսը կրվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Բախտը կռվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Խավարն ինչքան էլ խուլ՝
- Վերջը պիտի ցրվի,
- Լույսը փռվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Ինչքան խառն ու խրթին,
- Ինչքան էլ բարդ ու բիրտ,
- Կյանքն ապրվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Չիրքը տրվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Միտքը սրվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Երբ բառերը հոգուդ
- Ակնամուճն են քանդում,
- Երգը գրվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:
- Իսկ երբ երգի գլխին
- Կայծակներ են պայթում,
- Երգը կռվի պիտի,
- Ուրիշ հնար չկա:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱԼ

## Վերականգնվում է Սյունիքի մարզով անցնող 346-Խոտ կմ0+000 -կմ1+963 (մոտ 2 կմ) ճանապարհահատվածը

Հինաշխատանքներն իրականացնում է «Ճանապարհ» ՓԲԸ և «ՀԱԵԿ-ի շինարարություն» ՓԲԸ համատեղ ձեռնարկությամբ: Հողային աշխատանքներն այս ճանապարհահատվածում մոտենում են ավարտին, կապալառուն սկսում է վաբերի կառուցման, ենթահիմքի տեղադրման նախապատրաստական աշխատանքները:

Շինարարությանը զուգահեռ՝ կապալառուն օրվա ընթացքում նորոգվող ճանապարհին պարբերաբար կատարում է ջրցանում շինաշխատանքների հետևանքով առաջացող փոշու քանակությունը նվազագույնի հասցնելու համար:

346-Խոտ կմ0+000 -կմ1+963 ճանապարհահատվածը վերականգնվում է Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Այս ճանապարհի վերականգնումը կնպաստի նաև զբոսաշրջության զարգացմանը: Խոտ գյուղի հարակից տարածքում են գտնվում պատմական եկեղեցիներ, բարանձավներ, մ.թ.ա. 2-1 հազարամյակների դամբարանադաշտեր:

||



### Վազգեն Սարգսյան. «Մեղրին իր քար ու քռայով այս երկիրը դարձնում է աշխարհի հզորներին իր դուռը բերող»

Այս շխարհագրական տարածք չէ Մեղրին, հայրենիքի մի բուն չէ: Եվ երբ դու Մեղրին տալիս ես օտարին, բո տան դուռը փակում ես քեզ վրա: Զգիտեմ՝ ներսից, չգիտեմ՝ դրսից, ու բանալին կախում ես կրծքիդ...



### Հերոսների հետմահու պարգևատրություն

Ապրիլի 9-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոսների հետմահու պարգևատրման արարողություն: Լախ՝ ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը:

Ելուարդ Վարդանի Շահնազարյանը, Գառնիկ Էդգարի Խյրլայթյանը, Կարեն Գեղեղի Գրիգորյանը, Արեն Զովիկի Արզումանյանը, Զովհաննես Սմբատի Զովհաննիսյանը, Արեգ Աշոտի Զակարյանը, Գարիկ Լեռնի Սարգսյանը, Արտեմ Վաղիմիի Անտոնյանը, Զարուհյուն Սամվելի Վարդանյանը, Արտեմ Զեյնիկի Պողոսյանը, Գարիկ Սերյոժայի Ներսիսյանը, Զայկ Գազիկի Գրիգորյանը, Մանուկ Արթուրի Պողոսյանը, Արման Մայիսիկի Օհանյանը, Էդվարդ Գառնիկի Դանիելյանը, Արշակ Զրաչիկի Փարամազյանը, Բորիս Վարուժանի Ավանեսյանը, Դավիթ Երվանդի Դուկասյանը, Միտր Զարմոյի Աղաբեկյանը, Արսեն Լեւի Մանասյանը, Արամայիս Գազիկի Ծատրյանը, Խաչատուր Գուրգենի Խաչատրյանը:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱՂԱՆՅԱԼ

### Կարեն Դեմիրճյան. «Միայն իմ դիակի վրայով կանցնի այդ ճանապարհը»

70-ական թվականներին սկսվեց լայն թափով կառուցվել Բաբու-Նախիջևան ավտոմոբիլային ճանապարհը, որը բնականաբար պետք է անցներ Մեղրու շրջանի տարածքով՝ Արաքս գետի ափով: Թվում էր, թե ուր որ է հագուրդ կտրվեր թուրքերի երազանքին և հող կնախապատրաստվեր Մեծ Թուրանի ծրագրի իրականացման համար: Մեղրու սահմանագծի մոտ ծրագրի հեղինակների առջև դրվեց արգելափակոց: Նրանք հանդիպեցին ԶԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, մեծ հայրենասեր, իմաստուն քաղաքական գործիչ Կարեն Դեմիրճյանի անզիջում կամքին:

### Երիտասարդական մայրաքաղաք Կապանի բանալու հանձնումը կիրականացվի ապրիլին



2021 թվականին երիտասարդական մայրաքաղաք հռչակված Կապանում ապրիլ ամսից սկսած մի շարք միջոցառումներ են անցկացվելու: Այս մասին ասաց ԶԶ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

### Նռնաձորում կառուցվում է նոր թաղամաս Արցախից տեղահանվածների համար

Սկիզբ է առնում վերաբնակեցված ընտանիքներին: «Մեղրիի զարգացման հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սաբապետյանն ավելացրեց նաև, որ ոչ միայն քաղաքացիների վերաբնակեցման, այլև վերջիններիս աշխատանքով ապահովելու խնդիրներն են լուծում: Զիմ-Նադրամը բանակցել է նռան հումքով



Դեմիրճյանի միջև. - Ռիման Աղասիևնա, խորհուրդ տվեք Կարեն Սերոբյանին, որպեսզի նա համաձայնվի ճանապարհի շինարարությանը, չէ՞ որ նրան չեն ների: - Իսկ ժողովուրդը կների՞, եթե նա սկսի բաժանել Զայաստանի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող տարածքները: - Վերջ տվեք, Ռիման Աղասիևնա, թող համաձայնվի, չի փոշմանի: Իր համար լավ կլինի: - Գիտե՞ք, ես երբեք չեմ խառնվում Կարեն Սերոբյանի գործերին: Նա այն մարդն է, և ինքն էլ չեմ կարող ինձ թույլ տալ նման բաներ: Սակայն այս անգամ խոստանում եմ անապաման միջամտել և ասել նրան, որպեսզի ոչ մի դեպքում չհամաձայնվի: - Ձեր գործն է, բայց իմացեք, որպես կրակի հետ եք խաղում: Այս բոլորը ես ասացի ձեր բարին կամենալով...

ԱՆՆԱ ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Է կամավորության հետ կապված միջոցառում, անց է կացվելու երիտասարդական ֆորում, իրականացվելու է երիտասարդ աշխատողների վերապատրաստում», - նշեց Մարտիրոսյանը:

դիսանան կրոպերատիվի աշխատողներ: Այդ եղանակով կարող ենք իրականացնել վերջիններիս սոցիալական ապահովությունը, միաժամանակ գաղափար կա էքստրեմալ տուրիզմի զարգացման հետ կապված: Աշխատանքները շարունակական են լինելու», - եզրափակեց Արմեն Սաբապետյանը:

ARMENPRESS.AM

# Մեր լինելիության բանաձեռը. երբ Սյունիքն այլևս այն չէ, ինչ էր կապիտուլյացիայից առաջ

## Սկիզբը՝ էջ 1

ավերված տարածքներում», – ասել է Ալիեը Թրքայեզու պետությունների համագործակցության խորհրդի ոչ պաշտոնական գագաթնաժողովում:

Ալիեի վաղ նույնպես Իլիամ Ալիեմ անդրադարձել է Սյունիք-Չանգեզուրին, ինչը ներկայացրել էինք օրեր առաջ եւ տարակուսանք հայտնել, որ Հայաստանից որեւէ մեկը չի հակադարձում Ադրբեջանի նախագահին:

Ահա Ալիեի խոսքը Տնտեսական համագործակցության գագաթնաժողովում՝ «...Նոր միջանցքը, որ անցնելու է Ադրբեջանի պատմական տարածքով՝ Չանգեզուրով, եւ Ադրբեջանի հիմնական մասը կապելու է Նախիջեանի Ինքնավար Հանրապետության եւ Թուրքիայի հետ, տրանսպորտային ոլորտում նոր հնարավորություններ է ստեղծելու: Մենք հրավիրում ենք Տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրներին՝ Չանգեզուրի միջանցքը շահագործելու»:

Այսպես կոչված Չանգեզուրի միջանցքին Ադրբեջանի նախագահն անդրադարձել է նաեւ «Նոր Ադրբեջան» կուսակցության 7-րդ համագումարում՝ «Հայաստանը ցանկանում է խանգարել Չանգեզուրի միջանցքի ստեղծմանը, սակայն դա նրանց չի հաջողվի: Մենք նրանց կստիպենք: Պատերազմի հետևանքներից մեկը, իհարկե, Չանգեզուրի միջանցքն է, որն այսօր բնակարկման առարկա է դարձել: Չանգեզուրի միջանցքը պատմական նվաճում է: Այն փաստը, որ հարցն արտահայտված է եռակողմ հայտարարության մեջ՝ մեզ համար քաղաքական մեծ հաղթանակ է: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում Չանգեզուրի միջանցքի գործունեության ուղղությամբ... եւ դա մեր հաջորդ պատմական հաջողությունը կլինի»:

\* \* \*

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի նախագահը Սյունիքի մասին խոսում է այնպես, ինչպես կիսոսեր, ասենք, Ադրամի, Ֆիզուլիի, Աաչերոնի մասին...

Ցավոք, անպատասխան այդ խոսքերը բարբառանք չեն սոսկ, այլ...

Եվ որպեսզի գիտակցենք դրանց իրական նշանակությունն ու վտանգավորությունը, փորձենք համառոտ պատասխան տալ հարցին՝ իսկ ի՞նչ կատարվեց Սյունիքում 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո:

**Նախ**՝ ինչ-որ հուշագրի համաձայն, որ զարդանագեղանքից հետագայում, 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայկական մարտական դիրքերը (վերին հրամանով) հետ քաշվեցին եւ տեղակայվեցին Նախկին ԽՍՀՄ սահմանի երկարությամբ՝ մեզ համար ակնհայտորեն ոչ նպաստավոր տեղերում:

Դիրքային այդ փոփոխությունները տարակուսանքի տեղիք չէին տա, եթե 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 1-ին կետում ամրագրված չլիներ՝ «Ադրբեջանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում»:

Երկրորդ՝ Սյունիք-Ադրբեջան արեւելյան սահմանի մի շարք հատվածներում կորցրեցինք այն սահմանը, որ ունեինք Խորհրդային Միության ժամանակներում:

Բազմաթիվ մարդիկ նույնիսկ իրենց սեփական հողատարածքներից գրկվեցին, որ ժամանակին ձեռք էին բերել գործող օրենքի համաձայն եւ որոնց համար երեք տասնամյակ շարունակ հողի հարկ վճարել:

**Երրորդ**՝ փաստորեն (գործնականում) այլևս մեր լիարժեք հսկողության տակ չէ Գորիս-Կապան մայրուղին, որը ներկայումս կյանքի յուրօրինակ ճանապարհ է Սյունիքի համար:

Գորիսից Կապան (կամ հակառակը) գնալու համար անցնում ենք ադրբեջանական ութ մարտական դիրքի հայացքի ներքո: Դրանց հեռավորությունը մայրուղուց՝ որոշ դեպքերում 10-100 մ է: Իսկ թե քանի դիրքեր չեն երեւում արտաբնական, բայց գտնվում են մայրուղու մերձակայքում, չգիտենք:

Ընդ որում՝ այդ դիրքերն այնպիսի իշխող

տեղերում են, որ ցանկացած պահի կարող են արգելափակել մայրուղին:

**Չորրորդ**՝ Գորիս-Կապան ավտոմայրուղում պարբերաբար կարելի է ականատես լինել ադրբեջանական զինվորների տեղաշարժի՝ ՌԴ սահմանապահների մեքենայի առաջնորդությամբ:

Փաստորեն մեր ճանապարհով են ադրբեջանցի զինվորները հերթապահության գնում իրենց մարտական դիրքեր:

Ուշագրավ այլ իրողություն՝ եւս:

Վերջերս Չայգամի տարածքով անցնելիս ականատես եղանք մի իրողության, որ ականա հիշեցիմք Ստեփան Չոբյանի հայտնի պատմվածքը՝ «Ջրհորի մոտ»: Հինգ-վեց ադրբեջանցի զինվոր՝ ջրի տարաներով, մեր զինվորներից մի քանի մետր հեռավորությամբ ձգվող ճանապարհով, գնում էին մեր աղբյուրից ջուր բերելու...

Լսվ՛ է, թե՛ վատ՝ այլ հարց է:

## Ոչ իշխանական դաշտում նույնպես չգտնվեց քաղաքական մի ուժ կամ գործիչ, որ կոնկրետ գործողություններով կկարողանար շատ թե քիչ հակազդել Սյունիքի դեմ թեւածող կամայականություններին:

**Հինգերորդ**՝ շրջանառության մեջ է դրվել (նաեւ հայրց խոսքերի շնչաբերով) տեսակետը, թե իբր Գորիս-Դավիթ բեկ մայրուղին (21 կմ երկարությամբ) ամբողջապես անցնում է Ադրբեջանի տարածքով: Իրականում, մինչդեռ, մայրուղին միայն որոշ տեղերում է հատում Ադրբեջանի տարածքը եւ կրկին մտնում Հայաստանի տարածք: Իսկ մենք այսօրում ենք այդ ճանապարհահատվածներում տարբերակներ տեղակայել՝ տպավորություն ստեղծելով, որ մայրուղու 21 կմ-ոց հատվածն ամբողջապես անցնում է Ադրբեջանով՝ դրանից բխող հետեւանքներով:

**Վեցերորդ**՝ Սյունիքում հստակ տեղեկություններ չկան, թե ինչ վիճակում է երկրամասի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան սահմանագիծը՝ Սեւ լճից, Մեծ Իշխանասարից մինչեւ Ծղուկ լեռ, մինչեւ Փոքր Ալ լիճ, այլուհետեւ մինչեւ Ռոտուն գետի ակունքներ:

Ճիշտ է, իմնա այնտեղ ձյուն է, բայց ամռանը Գորիսի եւ Միսիանի տարածաշրջանների խոշոր ու մանր եղջերավոր անասունների մեծ մասը կտեղափոխվի ամառային այդ արոտներ: Եվ տվյալ տարածքներում սահմանազատումն էական նշանակություն է ունենալու: Անգամ խորհրդային տարիներին այդ վայրերում՝ արոտների համար, հայ-ադրբեջանական ընդհարումներ էին տեղի ունենում:

Իսկ միգուցե սահմանազատումն այնտեղ նույնպե՛ս ավարտված է:

**Յոթերորդ**՝ բոլորը՝ Մոսկվայից մինչեւ Անկարա, Բաքվից մինչեւ Երեւան խոսում են հողորդակցության ուղիների ապաշրջափակման մասին, բայց որեւէ մեկը չի համարձակվում Իլիամին հարցնել՝ յուրաքանչյուր, բա ինչո՞ւ եւ արգելափակել Կապանից (Սյունիք գյուղով) Ազարակ, Եղվարդ եւ Ուժանիս տանող մայրուղին, որ անցնում է Սեղիլար գյուղով (խոսքը Կապանի տարածաշրջանի մի ամբողջ ենթաշրջանի շրջափակված լինելու մասին է):

**Ութերորդ**՝ իրավասու ատյանները հրաժարվում են շատ թե քիչ ամբողջական տեղեկություն ներկայացնել, թե Սյունիքի արեւելյան սահմանի երկարությամբ պաշտպանական ինչ համակարգ է գործում իմնա՝ մոռանալով, որ դա մարզի բնակչության համար մեծագույն հետաքրքրություն ներկայացնող հարց է՝ մոռանալով նաեւ, որ հավաստի տեղեկատվության բացակայությունը անորոշության սկիզբն է...

**Իններորդ**՝ շարունակվում է Սյունիքի արեւելյան սահմանների GPS-ային որոշումը: Միայն վերջին շաբաթվա ընթացքում մոտ 15 հա հողատարածք է Խոզավարից անցել Լաչինի շրջանին (խորհրդային տարիներին այդ

հանդամադր երբեք դուրս չի եղել Խոզավարի տարածքից):

Նման կեղծ սահմանորոշման հետեւանքով Վաղատուր գյուղը նույնպես դարձել է սահմանամերձ, որ երբեք այդպիսին չի եղել...

**Տասներորդ**՝ Սյունիքը տնտեսական ահռելի կորուստ է կրել հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որի ընդհանուր ծավալները դեռեւս հաշվարկված չեն:

Առերեսույթ մի բան է ակնհայտ՝ սահմանային գրեթե բոլոր գյուղերում խնդիրներ են առաջացել եւ անասնապահության, եւ դաշտավարության, եւ ջրօգտագործման ոլորտներում:

**Տասնեկերորդ**՝ Շուռնուխում եւ Որոտանում բազմաթիվ բնակելի տներ են անցել Ադրբեջանի տիրապետության ներքո:

\* \* \*

Օգտվելով Հայոց պետությանն ու պետականությանը համակած անօրինակ ճգնաժամից, մեր ինքնիշխանության՝ նվազագույն կիչին հասած վիճակից՝ Ադրբեջանն օրակարգային հարց է դարձրել Մեդրիի միջանցքի ստեղծումը...

Ընդ որում՝ դա եղել է Քեմալի երազանքը 1920-ականներին. մեր արժանապատիվ նախնիները մերժել են այդ ցնորամտությունը:

Դա եղել է կոմունիստական Ադրբեջանի երազանքը. Կարեն Դեմիրճյան փառահեղ

առաջնորդը թե՛լ է նրանց ճակատին:

Անգամ Գրիգոր Հարությունյան առաջնորդն է ստալինյան օրերում համարձակվել դեմ գնալ Մեդրիի միջանցքի բացմանը:

Հիմա թուրք-ազդերիները, կարծեք, ի կատար են ածում իրենց դարավոր երազանքը, ինչի վկայությունն Ադրբեջանի նախագահի պերմանենտ հայտարարություններն են, որ ներկայացրիւք սույն հրապարակման սկզբում:

Տեսնենք, թե ինչ ընթացք կունենա Մեդրիի միջանցքի ստեղծման համար բարձրացված համաշխարհային մրկակահովը...

Մյուս կողմից՝ տեղեկատվական դաշտում անընդհատ լուրեր են շրջանառվում Սյունիքի շուրջ թշնամական երկրների զինուժի կուտակումների մասին:

\* \* \*

Հայաստանի գործող իշխանությունը, օրվա վարչապետի գլխավորությամբ, ոչ միայն ոչինչ չարեց Սյունիքի սողացող անեքսիան կասեցնելու համար, այլեւ իր լուրջությամբ, ինչ-ինչ թաքուն պայմանավորվածություններով (բացահայտված հուշագիրը՝ ահավասիկ) նպաստել է նպաստում է դրան...

Ոչ իշխանական դաշտում նույնպես չգտնվեց քաղաքական մի ուժ կամ գործիչ, որ կոնկրետ գործողություններով կկարողանար շատ թե քիչ հակազդել Սյունիքի դեմ թեւածող կամայականություններին:

Ընդ որում՝ գրեթե բոլորն ամեն օր (իրար հերթ չտալով) խոսում են Սյունիքի մասին, բայց ոչ մի արդյունք, ոչ մի դրական տեղաշարժ... Խոսելու առումով իսկական մրցույթ է. կարելու է, թե ով առաջինը ֆեյսբուքյան գրառմամբ, օրինակ, կազարարի Շուռնուխի կովերը գողանալու մասին: Իսկ եթե մի քանի օր կովերի գողություն չի լինում, ապա մեկ այլ գրառմամբ անցյալ տարվա դեկտեմբերին Թուրուսի խուբի շուրջ (Արավուս) տեղի ունեցածը հրամցվում է իբրեւ 2021 թ. մարտյան իրադարձություն...

Ազգային ժողովում էլ չկա մի ուժ կամ խմբակցություն, որ սեփական ամբիցիաները ժամանակավորապես կորցնի եւ Սյունիքի խնդիրներով զբաղվի...

Առայժմ միայն Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումն ենք լսում, ըստ որի՝ Սյունիքի ստատուս-քվոյի խախտումը կնշանակեր կարմիր գծի ոտնահարում՝ դրանից բխող հետեւանքներով, ինչը ողջունում ենք:

Ռուսաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարներն են ժամանակ առ ժամանակ բնակարաններ անում մեր պաշտպանության նախարարի հետ: Դրա տեսանելի արդյունքն էլ այն է, որ սյունիքյան մայրու-

ղիներում պարբերաբար հանդիպում ենք ՌԴ ռազմատեխնիկական միավորների, Գորիսի փողոցներում էլ՝ զբոսնող ռուս զինվորականների, ինչը նույնպես ողջունելի է, թեեւ այդպես էլ հստակ չի երեւում, թե ՌԴ զինվորականները Սյունիքում ինչ առաքելություն են իրականացնում (խոսքը, բնականաբար, չի վերաբերում Մեդրիի սահմանապահ ջոկատին):

\* \* \*

Դե իսկ բուն Սյունիքում ...

Դեռեւս պատերազմի օրերին, երբ վճռվում էր ոչ միայն Արցախի, այլեւ մեր հանրապետության լինել-չլինելու հարցը, մարզում նոր թափ առավ ընդերքի թալանը, հանքարդյունաբերական հայտնի ընկերության բաժնետոմսերը միմյանցից փախցնելու մրուցքը: Այդ երեսույթի դրսեւորումներից մեկի շուրջ ներկայումս ընթանում է դատական «ռազբորկա»...

Մարզի ընդերքի թալանի անվտանգ ընթացքն ապահովելու համար նույնիսկ ինչ-որ կուսակցություն է մոզմունում, որի յուզբաշին Սյունիքի երեւնալի մարզպետներից մեկն է՝ Թուրք պիտակով:

Այդ «կուսակցություն» կոչված թայֆայի խնդիրը, որքանով տեսնում ենք, նաեւ մարզի հասարակության հետագա պառակտումն է, զիտակից սյունեցիներին, մտավորական սյունեցիներին հետապնդելը, սեփական դաշաղական խմբակի օգնությամբ անհնազանդների հետ հաշվեհարդար տեսնելը...

\* \* \*

Ստեղծված իրավիճակում կյանքը Սյունիքին եւ սյունեցուն ապրելու նոր բանաձեւ է պարտադրում...

Հիմա, առավել քան երբեւէ, օրվա հերոսը հայոց զինվորն է, այն տղաներն են, ովքեր երեկ գնացին ճակատ՝ հանուն հայրենիքի նահատակվելու պատրաստակամությամբ, ովքեր վաղն էլ (մեր կիսատ թողած գործը շարունակելու համար) նորից կրակագիծ են մեկնելու:

Օրվա հերոսը սահմանամերձ-սահմանապահ գյուղի բնակիչն է՝ սերմնացանն ու հոտաղը, որ թշնամու մարտական դիրքի անմիջական հարեանությամբ տեր են կանգնում հայրենի քարափներին:

Օրվա հերոսը սահմանամերձի ուսուցիչն է, մանկապարտեզի դաստիարակը, բժիշկը, քարը քարին դնող բնակիչը:

Օրվա հերոսը նույն ինքը՝ Կապանի ընտրյալ համայնքապետ Գեուրգ Փարսյանն է, ում կենարար հետքը տեսնում ենք տարածաշրջանի սահմանային գյուղերում, ով մեն-մենակ մի ամբողջ կուսակցությունից առավել բեռ է վերցրել իր ուսերին...

Նաեւ նրանք են, ովքեր պաշտոնի բերումով, առանց ճղճղաբան, սահմանում նոր դիրքեր են իրմում կամ եղածն ամրապնդում:

Նրանք են, ովքեր տեր են մեր պատմական ժառանգությանն ու հայոց պատմական հիշողությանը:

Յենց այդպիսի մարդկանցով կամ մարդկանց այդ տեսակով է դարեր շարունակ Սյունիքը հայրենիք եղել մեր նախնիների համար, որն է ժառանգվել է մեզ:

Յենց այդպիսի մարդկանցով կամ մարդկանց այդ տեսակով ենք հաղթահարելու ներկայիս փորձությունը:

Այո, հողի մշակն իր գործը պիտի անի, մեր առյուծ տղերքը բանակային ծառայության պիտի մեկնեն, որ հայոց ազգային բանակի խամրած փառքը նորովի հաղահի:

Սեփական անշարժ գույքը վաճառքի հանած սյունեցիներ պիտի հետ կանգնի իր մտադրությունից, ամենատարբեր պատճառներով Սյունիքից հեռացածները պետք է տուն դառնան, մեր պառակտված վիճակից պիտի դուրս գանք, մեր երիտասարդ կանայք երեխաներ պիտի ունենան...

*Հավատացե՛ք՝ այրվերայ նաեւ արթուն կպահենք այն նահատակների հիշատակը, ովքեր հանուն հայրենիքի գոհվեցին Արցախյան Նորոյրա պատերազմում. իսկ նրանց թիվը չափազանց մեծ է. միայն Սյունիքում 210 հոգու հողին ենք հանձնել արդեն, 23 անհետ կորածի հրաշք-վերադարձի համար էլ արդթե ենք բարձրացնում առ Աստված:*

*Հավատացե՛ք՝ հենց այդպես հողս կցնդեցնենք բոլոր նրանց զառանցանք-երազանքները, ովքեր, օգտվելով մեր տերության անտերությունից ու մեր իշխանավորների անհայրենիք եւ անժողովուրդ գոյությունից, հայոց սրբազան Սյունիքի իրենց պապենական կալվածքն են փորձում համարել...*

||

# Կայացել են հանրային քննարկումներ՝ Յունսիս-հարավի Տրանս-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի վերակառուցման ծրագրի վերաբերյալ

Սյունիքի մարզի Քաջարան և Մեղրի բաղադրված կայացել է հանրային իրազեկման հանդիպումների առաջին փուլը՝ նվիրված Յունսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանս-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի վերակառուցման ծրագրին: Ծրագրի պատվիրատուի՝ ՀՀ ՏԿԵՆ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի, Նախագծող կազմակերպության՝ «Այ Ար Դի Ին-ջենեթինգ» և «Տի Փի Ինջենեթինգ» (Իտալիա) համատեղ ձեռնարկության ներկայացուցիչները Քաջարան և Մեղրի համայնքների բնակիչներին հետ հանդիպումներում մանրամասն ներկայացրել են Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի Նախնական Նախագիծը և Նախագծի շրջակա միջավայրի, ինչպես նաև սոցիալական ազդեցության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը: Հանրային քննարկման ընթացքում անդրադարձ է եղել Նախագծային, տեխնիկական պարամետրերին, շինարարության հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններին, ինչպես նաև՝ հողերի օտարման և տարաբնակեցման խնդիրներին:

Մասնավորապես, նշվել է, որ Տրանս-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի կառուցումը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներով: Ճանապարհահատվածն ունենալու է մոտ 45 կմ ընդհանուր երկարություն, որի առաջին հատվածի շինարարությունը (շուրջ 32 կմ) Նախատեսվում է սկսել 2022 թվականին: Նախատեսվող ճանապարհը որոշ հատվածներում անցնելու է գոյություն ունեցող ճանապարհով, որոշ հատվածներում կառուցվելու է նոր ծրագրով: Վերակառուցվելիք ճանապարհի շնորհիվ կրճատվելու է Քաջարան և Մեղրի համայնքներով տրանսպորտային երթուղիները (Նախատեսվում են համապատասխան շրջանցումներ), զուգահեռ շահագործվելու է նաև Մ-2 միջպետական ճանապարհի՝ ներկայումս գոյություն ունեցող հատվածը, և ցանկության դեպքում վարորդները կկարողանան երթուղիներ ևս հին ճանապարհով: Ըստ Նախագծի՝ կկառուցվեն կամուրջներ, տրանսպորտային հանգույցներ, թունելներ: Բոլոր թունելները Նախագծված են միջազգային չափանիշներին համապատասխան, կիրառվելու են անվտանգության մի շարք միջոցառումներ՝ հակահողեհային պաշտպանություն, օդափոխման համակարգ, սեյսմակայունություն և այլն:

Նախագիծն իրականացնելիս իտալական կազմակերպությունը մի քանի փուլով կատարել է գետտեխնիկական ուսումնասիրություն՝ համագործակցելով տեղացի մասնագետների հետ: Նոր ճանապարհը կկրճատի ինչպես տարածությունը (մոտ 14 կմ-ով), այնպես էլ երթուղիական ժամանակահատվածը. 80 կմ/ժ հաշվարկային արագության դեպքում կինսայվի մոտ 38 րոպե ժամանակ: Հանրային քննարկման կազմակերպիչները պատասխանել են նաև համայնքների բնակիչներին հետաքրքրող հարցերին: Դրանք հիմնականում վերաբերում էին հողերի օտարման, փոխհատուցման խնդիրներին. բնակիչները ցանկանում էին տեղեկանալ, թե ինչ ազդեցություն են կրելու իրենց հողատարածքները:

Ազգակիր համայնքների բնակիչներին հետաքրքրում էր նաև իրենց ներգրավվածությունը ճանապարհի շինաշխատանքներում: Ճանապարհային դեպարտամենտի աշխատակիցները տեղեկացրել են, որ տեղի աշխատուժի ներգրավումը շինաշխատանքներում կապալառու կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրի պարտադիր պայմաններից է լինելու:

Ընդգծվել է նաև, որ քննարկվող Նախագիծը Նախնական է, այն լրանվելու է՝ հաշվի առնելով համայնքների կողմից ստացված առաջարկները:

# Հին Հարժիսում կիրակնօրյակ էր, իսկ մարզպետն այցելել էր այնտեղ՝ քննարկելու գյուղի հիմնախնդիրները



Թեև հարժիսից հեռու 1931 թ. ապրիլի 28-ի հայտնի երկրաշարժից հետո դուրս էին եկել Որոտանի կիրճում գտնվող իրենց հնամենի բնակավայրից՝ բարձրավանդակում կառուցելով նոր գյուղ, սակայն այն մնացել է մնում է գյուղացիների ամենահոգեհարազատ վայրն ու պաշտելի տեղը:

Այնտեղ են ոչ միայն գյուղի սրբավայրերը, այլև յուրաքանչյուր հարժիսեցու պապենական օջախի արմատները, նաև հիշատակները:

Եվ, այդուհանդերձ, պաշտելի այդ տարածքը վերջին երեսուն տարում անուշադրության էր մատնված, թեև 1990-91-ին գյուղացիները՝ ակունքներին վերադառնալու մղումով, գնացել ու տեղ էին կանգնել Նախնայաց տներին, ինչպես և իրար մեջ բաժանել երբեմնի պետական տնտեսության ծաղկուն այգիները:

Ստեղծվել է մի վիճակ, որ երբեմնի գեղատեսիլ բնակավայրի այգիները չորացել են կամ կտրտվել, իսկ գյուղամիջյան ճանապարհ-արահետներն էլ պատվել մացառներով...

Ապրիլի 11-ին գյուղի մի խումբ բնակիչներ կիրակնօրյակ էին կազմակերպել այնտեղ՝ գյուղամիջյան ճանապարհ-արահետները, գյուղի գլխավոր արջուրը՝ հազարամյա նովերով, մաքրելու և կարգի բերելու նպատակով:

Կիրակնօրյակը նշանավորվեց արդ...

# Երեւանի ընդհանուր իրավասության դատարանն ուժից դուրս է հայտարարել Սահմանադրության 42-րդ հոդվածը՝ խոսքի ազատության մասին, եթե խոսքը վերաբերում է Քաջարանում գործող թիվ 1 ասպատակին

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը (հայցի ապահովման միջոց կիրառելու պատրվակով) ընդունել է որոշում, որով արգելել է «Սյունյաց երկիր» լրատվամիջոցին՝ որքան տեղեկություն տարածել 2014 թվականից Քաջարան ներխուժած թիվ 1 ասպատակի մասին՝ մինչև տվյալ քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Սա երկրորդ դեպքն է, երբ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը քաջարանյան ավազակախմբի անդամի վերաբերյալ որքան կարծիք հայտնելը, գնահատողական դատողություն անելն արգելափակել էր:

Փաստորեն՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, առաջնորդվելով բացառապես Քաջարան ներխուժած ավազակախմբի ֆինանսական



յունավետ աշխատանքով, սակայն արահետներն այնքան մացառապատ են ու անանցանելի, որ դեռևս մեծածավալ աշխատանքների կարիք կա...

Ապրիլի 11-ի օրը համընկել էր Սյունիքի մարզպետ Մելիքեթյանի «Պողոսյանի» Հարժիս կատարելիք այցին:

Մարզպետը նպատակ ուներ գյուղացիների հետ քննարկել տարիներ շարունակ պետական ուշադրությունից դուրս մնացած այդ բնակավայրի հիմնախնդիրները: Եվ հանդիպման վայր ընտրեց ոչ թե գյուղամեջը, այլ հին գյուղը՝ Որոտանի կիրճում,

որտեղ և բնակիչները կիրակնօրյակի էին դուրս եկել:

Գյուղացիներն արդարացիորեն նշեցին, որ տարիներ շարունակ Հարժիս գյուղում որքան հիմնախնդիր չի լուծվել, ընդհակառակը՝ քանդվել-ավերվել է գրեթե ամեն ինչ, որ գյուղը ժառանգություն էր ստացել խորհրդային ժամանակներից:

Առկա խնդիրների խնդիրը, անշուշտ, մնում է Գորիս-Երեւան մայրուղուց գյուղ ձգվող 6 կմ երկարությամբ ճանապարհը, որը հարթահարելու համար մեծ ջանքեր են պահանջվում: Եվ խայտառակ այդ վիճակը տասնամյակներ շարունակ դուրս է մնացել իշխանությունների ուշադրությունից:

Վերջին անգամ գյուղացիներն այդ հարցով վարչապետ Նիկոլ Փաշինյանին էին խնդրագիր հանձնել, երբ նա մեկ տարի առաջ անցնում էր Երեւան-Գորիս մայրուղով, բայց ոչ մի արդյունք:

Խորհրդային տարիներին կառուցված և համբավ ունեցող պահածոների գործարանն է ամբողջապես անսպիտակ դարձել ու փոշիացել, միևնույն տեղական հումքով գործող այդ ձեռնարկությունը մի քանի տասնյակ աշխատատեղ էր ապահովում:

Գյուղը գրկված է կապույտ վառելիքից, կոյուղուց, խախտու վիճակում է խմելու ջրի ներքին ցանցը, ծայրահեղ անմխիթար վիճակում է մշակույթի կենտրոնը: Հարժիսը հանիրավի դուրս է մնացել Տաթևի շուրջ մշակված և իրականացվող ծրագրերից, թեև գյուղը տվյալ տարածաշրջանի ամենահոգեւոր ու մշակութային բնակավայրերից է և դարձել շարունակ գրեթե միաձուլված է եղել Տաթև հոգեւոր կենտրոնի գործունեությանը:

Հիմնախնդիրների թվարկումը կարելի է շարունակել, սակայն հարցերի հարցը, կրկնում ենք, մայրուղի-Հարժիս ավտոճանապարհի ամրապի վիճակն է, առանց որի լուծման անհեթեթի կլինեն Նույնիկ մյուս հարցերին անորոշաբան...

Մարզպետը հավաստիացրեց բնակիչներին՝ առկա խնդիրներն ընդհանրացնել, դրանց աստիճանական լուծման ուղիներ մշակել և ներկայացնել կառավարության քննարկմանը:

Առայժմ միայն դպրոցական նոր շենք է կառուցվում գյուղում՝ վթարային փոխարեն, ինչը, անշուշտ, ողջունելի է:

Ողջունելի է նաև մոսկվայաբնակ հարժիսեցի Ավետ Քոյսյանի գործունեությունը, ով իր իսկ Նախաձեռնությամբ մի քանի խնդիր է հասցրել լուծել գյուղում:

...



այնտեղ Նախագահում (լուսանկարում), և դրանով ամեն ինչ ասված է...

Միջբանով հանդերձ՝ «Սյունյաց երկիր» մտադիր չէ իր լսարանին անհաղորդ դարձնել այն ամենին, ինչ կատարում են հայտնի հանքատերերը՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի:

Ընդհանուր իրավասության դատարանը կամայական կազմակերպություններին հետաքրքրում էր նաև իրենց ներգրավվածությունը ճանապարհի շինաշխատանքներում:

Ճիշտ է, հավաստարիմ կմախք դատարանի որոշմանը և մեր հրապարակումներում ժամանակավորապես չենք օգտագործի այդ ստանալի անուն-ազգանունը:

Նրա անվան փոխարեն կօգտագործենք այն պիտակը, որով նրան ավանդաբար կոչում են այս կողմերում՝ Փայլայան, իսկ ավելի ճիշտ՝ Քաջարանի թիվ 1 ասպատակ...

Ու թող որքան մեկը չկասկածի՝ Սյունիքի սրբազան հողն այսուհետ Նույնպես վառվելու է այստեղ ներխուժած սեյզմիկների ուղեղի տակ: Եվ Երեւանի ծնկաչոք դատավորները չեն կարողանալու փրկել նրանց...

# Հավերժ փառք Արցախյան պատերազմում Նահատակված հայոց քաջորդիներին



## Միրզոյան Կարեն. վերջին փամփուշտն իր համար էր պահել

Կարեն Արթուրի Միրզոյան. ծնվել է 2000թ. դեկտեմբերի 23-ին Ագարակ քաղաքում:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային ազդարային համալսարան: Ուսուցիչները չեն կարողանում գտնել արցունքներ, քանի որ, իրենց խոսքով, դեռ փոքրուց տեսնում էին, թե ինչքան հայրենասեր ու քաջ տղա է մեծանում:

2019թ. հունվարի 25-ին զորակոչվել է բաժնակ: Արցախում Ստեփանակերտում, ծառայելը Կարենը պատիվ էր համարում, հայրենասիրտ էր իրենց գործատու, երբեք չի բողոքել ծառայությունից: Թե՛ հրամանատարական կազմը, թե՛ ընկերները նրան հիշում ու բնութագրում են որպես նվիրված, ինքնավստահ, զիտակից, առաջնորդի ընդգծված հատկանիշներով օժտված ընկերոջ ու զինվորի: Չորակոչից 6 ամիս անց կրտսեր սերժանտի, ապա սերժանտի կոչում էր ստացել:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. Կարենը զորամասի կազմում կռվել է Ջրականում, Հարդուբում, Քարին տակում, հասել էր Շուշի:

Նոյեմբերի 7-ին զանգահարել էր տուն, խոսել՝ ասել, որ ամեն ինչ լավ է. ավանդ, վերջին զանգն էր... Զետո, հրաշքով փրկված ընկերը ծնողներին պիտի պատմեր, որ իրենց որդին՝ երեք տեղից վիրավոր, ու մի ուրիշ հերոս ժամեր շարունակ պայքարել են, կռվել են միևնույն նախավերջին փամփուշտը, քանի որ վերջին փամփուշտներն իրենց համար էին պահել, սպասել են օգնության: Երբ հասկացել են, որ հնարավոր է թուրքի ձեռքն ընկնեն, ինքնասպան են եղել...

Պիտի լսելն ծնողներն ու հիշելն, թե ինչպես էր իրենց որդին հիանում Ռոբերտ Աբաջյանով, ինչպես էր նայում նրա նկարին ու ասում. «Իսկական տղեն ինքն ա...»: //



## Գրիգոր Գրիգորյան. հայրենիքն իր կյանքից վեր դասեց

Գրիգոր Արայիկի Գրիգորյան. ծնվել է 1993թ. փետրվարի 13-ին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Մանուկ Գրիգորին նկարագրելիս գյուղացիներն առանձնացնում են աշխատասիրության հատկանիշը. նա՝ տակավին մանուկ, մեծահասակներին օգնում էր թե՛ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս, թե՛ ներտնային գործերում: Սովորել է ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ուսուցիչները նրա մասին խոսելիս հուզվում են, հպարտանում, որ դասավանդել են նրան, պատմում, որ Գրիգորի հայրենասիրության հիմքում հայոց պատմությունից ունեցած գիտելիքներն էին: Ուսուցիչներն ընդգծում են նաև Գրիգորի՝ իրենից փոքրին, թույլին պաշտպանելու ձգտումը:

Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Ստեփանակերտում. ավելի չերմ սիրով է կապվել մեր հայրենիքի այդ կտորին:

Չորացրվելուց հետո ընդունվել է Երեւանի Եվրասիա միջազգային համալսարանը, ավարտել, բայց դիպլոմը չհասցրեց ստանալ:

2017թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ընկերները Գրիգորի մասին խոսում են անթաքնից ցավով: Բոլորի համար են ցավում, բայց Գրիգորն իրենց ընկերախմբի վառ աստղն էր՝ իր կատակներով, լայն ժպիտով, հյուրասիրությամբ ու հասնելու-օգնելու պատրաստակամությամբ:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց... Գրիգորը, Արցախ մեկնելուց առաջ, մի քանի րոպեով տուն էր մտել, անհրաժեշտ իրերը վերցրել: Ծնողների հարցին, թե ո՞ր է գնում, հանգիստ պատասխանել էր՝ «Իմ տեղը»: Տանեցիկներն օրեր շարունակ կարծել էին, թե Գրիգորը Սյունիքին մոտ գտնվող դիրքերում է: Մի անգամ մոր հետ հեռախոսազրույցի ժամանակ, Գրիգորին շատ մոտ արկ էր պայթել, Գրիգորը ստիպված ասել էր, որ Արցախում է:

Ընտանիքի անդամներն ու ընկերները համոզված էին, որ Գրիգորին ոչինչ չի պատահի, համոզված էին, որովհետեւ քաջ, առույգ երիտասարդը մանկուց սովոր էր դժվարություններին: Նրա հետ ռազմադաշտում կռված ժամկետայինները հիշում են, թե քանի անգամ է Գրիգորը հակառակվել նահանջելու հրամանին, փակել նահանջողների ճանապարհը, պահանջել կռվել միևնույն վերջ... Ինքը չէր նահանջել, կռվել էր միևնույն վերջ... Զոկտեմբերի 14-ին ընկել է Գրիգորը...

Ամիսներ շարունակ ընտանիքն արդյունքում ու սպասում էր. ավանդ, սպասումները զուր էին, արդյթները՝ միայն երկնային կյանքի համար: Փետրվարի 23-ին ԴՆԹ հետազոտության արդյունքում հաստատվեց՝ Գրիգոր Գրիգորյանը նահատակվել է... //



## Յուրի Ալեկորյան. հիշատակդ անմար, հայրենիքի զինվոր

Ցավալիորեն տխուր է ծանոթանալ 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդ դարձած մեր տղաների կենսագրությանը: Անմահացածներից շատերը չէին բոլորել 20 տարին: Ահավասիկ, նրանցից մեկն է Յուրի Միտի Ալեկորյանը: Ծնվել է 2001 թ. ապրիլի 10-ին Կապանում, սովորել թիվ 6 հիմնական դպրոցում: Նրան դասավանդած մանկավարժները հիշում են, որ Յուրիի առաջադիմությունը գերազանց չէր, բայց շատ ուշադիր էր հարգալից էր շրջապատի հանդեպ: Բարձրահասակ լինելու համար դասընկեր նրան վերջին նստարանին էր նստեցրել, այդտեղից էր «սկսում» դասարանի կարգ ու կանոնը: Իսկ դասամիջոցներին աղջիկներին էր երբեմն սաստում՝ «Ձեզ համեստ պահեք»:

«Ոչինչ, որ բարձր առաջադիմություն չունի, բայց երեսուն է, որ հայրենիքին արժանապատվորեն ծառայող զինվոր կլինի», – մտածում էին նրա մասին ուսուցիչները. այդպես էլ եղավ:

Յուրի տարեկանից հաճախել է Սյունիքի մարզի քիմ-բոթանիկ «Գարեգին Նժդեհ» ակումբը, մասնակցել մրցաշարերի, դարձել հանրապետության չեմպիոն: Ակումբի մարզիչ, ՀՀ մասնագետ մարզիչ Արա Սարգսյանը Յուրիին բնութագրեց որպես պարտաճանաչ, բարի կամեցող, աշխատասեր պատանի, ով մարզումների ժամանակ հետեւողականորեն բարձրացնում էր իր տակտիկական և ֆիզիկական որակները:

2017-2018 թթ. Յուրին սովորել է Կապանի թիվ 3 հաստիկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) խմբի վարսավիրական բաժնում: Մասնագիտություն ստանալուց հետո 2019 թ. հուլիսի 5-ին զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Մարտունու զորամասում՝ հրետանավոր: Չինակից ընկերները նրան Մոնթե էին անվանում՝ մարդկային տեսակով մե ազգասիրությամբ նմանեցնելով Մոնթե Մեյբոնյանին:

2020 թ. սեպտեմբերի 27-ից ակտիվորեն մասնակցում էր մարտական գործողություններին: Ավանդ, մարտերից մեկը վերջինը եղավ զինվորի համար: Բայց որքան նպատակներ ուներ նա, նվիրական երազանքներ, որոնք այդպես էլ մնացին չիրականացած...

Ընկերներն անմար են պահում նրա հիշատակը, մասնավորապես քիմ բռնցքամարտի «Գարեգին Նժդեհ» ակումբի աստեղը: Վերջերս նրանք մասնակցեցին Արցախի քիմ-բոթանիկ ակումբային առաջնությանը: Կապանից 10 մարզիկից յոթը դարձավ հաղթող. հաղթանակը նվիրեցին ակումբի նախկին ասն, մերօրյա պատերազմի նահատակ Յուրի Ալեկորյանի հիշատակին:

Մարտի 24-ին Կապանի ակումբագրադարանային ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ հիշատակի միջոցառում՝ նվիրված Յուրի Ալեկորյանի անմահ հիշատակին:

Վահրամ Օրբելյան



## Հերոս Աշոտ Բաղդազյուլյանի հիշատակին

Աշոտ Վարազդատի Բաղդազյուլյանը ծնվել է Գորիսի շրջանի Խնձորենկ գյուղում՝ 1973թ. փետրվարի 20-ին: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 1990թ. ընդունվել է 1995 թ. ավարտել է Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտը: 1996 թ. զորակոչվել է բանակ: 2000թ. ամուսնացել է Արմենուի Հայրապետյանի հետ՝ ունեցել են 3 երեխա. բացառիկ հայր էր, ուշադիր ամուսին:

2015 թ. աշխատանքի է անցել զինված ուժերում որպես սպա, ստացել ավագ լեյտենանտի կոչում, եղել է տանկային դասակի և տանկային վաշտի հրամանատար: 2019թ. արժանացել է «Ծովակալ Իսակով» մեդալի:

Աշոտ Բաղդազյուլյանը հարազատ երեխաների նման սիրում էր զինվորներին, նրանց անվտանգությունն ու առողջությունն իր համար առաջնայինն էին:

2016թ. ապրիլին Աշոտ Բաղդազյուլյանը զորամասի կազմով մասնակցել է մարտերին:

2020թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը. Աշոտը հոսպիտալում էր՝ վիրահատվել էր շնչառական խնդիրների պատճառով: Սեպտեմբերի 28-ին արդեն հոսպիտալում վիրավոր զինվորներ կային, նա, առանց լրիվ բուժվելու, երեկոյան դուրս է գրվում հիվանդանոցից՝ տանը բուժումը շարունակելու հանձնարարությամբ: Բժշկի թուղթը, որում նշված էր՝ տասնօրյա տևալիս ինքնաբերական զորամասում. հաջորդ առավոտյան աշխատավայրում էր...

Վերանորոգում էր տանկերը, անձամբ հետևում կազմակերպչական աշխատանքներին, զիջերը հերթապահում տանկերի մոտ՝ չնայած իր վատառողջ վիճակին:

Անհամբեր սպասում էր իր ծառայակից ընկերներին, ովքեր սեպտեմբերի 15-ին մեկնել էին Վոլգոգրադ՝ մասնակցելու «Կովկաս 2020» զորավարժություններին: Սեպտեմբերի 29-ին նրանք վերադարձան ու Աշոտը նրանց հետ շտապեց մարտադաշտ: Զոկտեմբերի 8-ին Ջրականի հետգրավման մարտերում գործել է բազում սխրանքներ, ոչնչացրել է թշնամու բազմաթիվ կրակակետեր: Աշոտը, իր անձը մոռացած, օգնության է հասել շրջափակման մեջ գտնվող զինվորներին՝ տանկով միայնակ միտքով թշնամու շրջափակման մեջ գտնվող տարածք՝ իր վստահ քայլերով, հրամանատարի քաջությամբ, հմուտ սպայի հնարքներով փրկելով նրանց: Կռիվներից մեկի ժամանակ վերջին արկը մնացել է տանկի փողի մեջ (չի կրակել), Աշոտը դուրս է եկել տանկից, թշնամին պայթեցրել է տանկը: Զրաշքով փրկված սպան երկու անսարք տանկ է գտել, երկու օր վերանորոգել, որպեսզի գոնե դրանք զորամաս հասցնի: Տունդարձի ժամանակ նրան էր վստահվել փրկված զինվորների կյանքը. ճանապարհին նրան առաջարկել են մեքենայով գնալ, իսկ նա, որպես զինվորների կյանքի համար պատասխանատու անձ, հրաժարվել է:

Զոկտեմբերի 16-ին թշնամին խոցել է տանկը. գոհվել է Աշոտը տանկի անձնակազմի հետ՝ կիսելով նրանց հետ ոչ միայն վերջին պատառը, այլև մահը: Աշոտ Բաղդազյուլյանը հավատարիմ մնաց սպայի կոչմանը, որպեսզի իր որդիները՝ Վարազդատն ու Հարությունը, իրենով հպարտանան և սիրով են «Հերոսի զավակ» լինելու իրողությամբ: //



# Ակսել Բակունցի ոգեղեն օջախում



ՍԵՐՃ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բակունց գրողին տակավին դարձրեցին տարիներից սիրեցի՝ ընթերցողական վայելում ունենալով նախ ևրա «Ակսել Բակունցի» գոհարակերտ պատմվածքը: Հետո, արդեն դարձրեցին ծրագրերից զատ, համալրական ընթերցեցի «Միրիադ», «Սպիտակ ձին», «Խոնարհ աղջիկը», «Ծիրանի փողոց», «Այլ սարի լանջին» ու էլի շատ սքանչելի գրվածքներ: Եվ բանի դեռ չունեի բանասիրական կրթություն, շահեկանորեն միաժամանակ գերծ էի կանխակալ գրականագիտական, հաճախ սուբյեկտիվ ուղղորդումներից, տարակարծիք մեկնաբանություններից, ուստի կարողացածս ընկալում էի զուտ պատասնեկան ջիջ հոգով՝ անմիջական ու յուրովի:

Բակունցը կյանքիս ուղեկիցն է. տասնամյակներ շարունակ վերընթերցում եմ ոսկեգրից սիրելի գրողին կրկին ու կրկին: Եվ ամեն անգամ զարմանալիորեն չնկատված բակունցյան մի նրբերանգ, նոր ծայր եմ հայտնաբերում կամ բացահայտում ինձ համար...

\*\*\*

...2020-ի սեպտեմբերի 20-ին, վերահաս աղետաբեր պատերազմից ուղիղ յոթ օր առաջ, որպես սրտի վաղեմի փափագ, Ակսել Բակունցի ծննդավայր Գորիս մեկնեցի: Նպատակս տարիներ առաջ իմ ձեռք բերած, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հենրիկ Մամյանի՝ Ակսել Բակունցին վայելուչ հագուկապով պատկերած գեղարվեստական ուշագրավ գրաֆիկ աշխատանքը գրողի տուն-թանգարանին նվիրելն էր: Միշտ խորհում էի, որ նկարի ճշմարիտ հասցետեղը, արդարև, թանգարանը է. նրա հագուկապով այցելուներն են:

...Բացվող օրվա վաղ առավոտյան իմ մեքենայով ճամփա ելա: Լորածագ արելի առաջին շողերի հետ արդեն Աշտարակից Գորիս՝ 280 կիլոմետրանոց երկարուծիգ ճանապարհին եմ:

...Մայրուղու վերջնամասի աջ կողմում հին օրերի մի ցուցանակ կա՝ Օդանավակայան: Այո, մոտեցում էր Գորիսի երբեմնի աշխույժ առօրյայով ապրող ու գործող օդանավակայանը, որից այսօր ընդամենը բարի հիշողություններ են մնացել:

Մտքիս կիզակետում դարձյալ մեր ժողովրդի պանծալի գավակ Ակսել Բակունցն է, լուսավոր, անհասանելի հանճարը, նա, որի հոգու թարգման գրիչը համաշխարհային ինչպիսի նոր որակ, ինչքան շոյալ, անխամրելի գույներ բերեց գրականության...

Խորին հարգանքով եմ աչքերիս մեջ առնում Բակունց ծնած այս լեռնաշխարհը...

Վերջին կեռնանի բարձունքից, լեռնագագ տափարակի վրա, մեկնեմ բացվում է հիասքանչ բազմաբնույթ Գորիսի համայնապատկերը՝ կանոնավոր, ուղիղ փողոցներ, վարչական ու բնակելի շենքեր: Իսկ կանաչավետ պարտեզներով պարուրված առանձնատները բնաշխարհիկ, հայկական ժողովրդական, նաե՛ն ավանդական եւ արդի ճարտարապետական տարրերի համադրումով զուտ գորիսյան ոճի ինքնատիպ գեղեցկագույն նմուշներ են եւ որոնք բազմաբնույթ առանձնահատուկ կյուրիստ են հաղորդում: Այնուամենայնիվ, Գորիսի «առանձնաշնորհայ» դիմագիծ են երկինք միտող կոնաձե «ցից» բարաժայերը՝ բերձերը: Դրանցից փոկերերի ներսում հնում համար մարդիկ անձավ-կացարաններ են փորել եւ այդ յուրատեսակ բարափոր տներում ապրել սերունդներով...

Բարձունքից գնալով ճի ուղիով եմ բաղա-

բը, շրջակա լեռներն ու ձորերը: Մտաբերում եմ գորիսյան տեղանունները, սակայն առանց տեղացի օգնական-հուշարարի, դժվար է որոշակիորեն գանազանել, թե որն է Լաստի խուբը, որը՝ Դրեզանը, Գյուլեյ թաղը կամ Գայլաբունի ձորը, Պղնձաբարը, Շորը... Չէ՞ որ դրանց մասին իրենց գրվածքներում բազմիցս հիշատակել են Ակսել Բակունցը («Կյուրե», «Բրուտի տղան» եւ այլն) եւ Վահան Բակունցը՝ իր հեղինակած «Մեծ հույզերի սերմնացանը»՝ ավագ եղբորը նվիրված հիշողությունների հիանալի գրքում:

Հատում եմ Մեղրի-Իրան եւ Արցախ տաճարային հանգույց-խաչմերուկը, ավտոմեքենան վարում նվիրական անուններ կրող բազմաթիվ Դավիթ-Բեկ, Գարեգին Նժդեհ, Անկախության փողոցներով եւ Մաշտոցի 41-ում կայանում իմ փնտրած նշանավոր տան մոտ:

Գրանիտե եռալեզու ցուցանակը ծանուցում է՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ցուցատախտակի վերնամասում գրողի պորտրետով պատկերված դիմանկարն է: Տան պատի ոճավորված խորշում Բակունցի բազալտե կիսանդրին է՝ բարեհարմար ագուցված:

Փողոցում ուշադրությունս գրավում է սիգամարգում ամուր ու աներեր կանգնած վիթխարի ընկուզենի՝ բունը դալար լիաններով ընդելուզված (հետո կիմանամ, որ ծառը պատանի Սանթրի-Ալեքսանդրի տնկածն է՝ դարահասակ կենդանի մասունք-հուշարձան... Ցանկանք, ուրեմն, որ այն էլի մեկ դար այսպես խշշա կանաչ...):

Կամարածե փայտե դարպասի բաց փեղկով ներս եմ մտնում՝ սալարկված կոկիկ բակ, խնամված, ընդարձակ այգի եւ, իհարկե, գրողի հորենական տունը: Այն, կարելի է ասել մեկուկես հարկանի է՝ լայն պատշգամբով, հնաճ ցանցապատ դռներով ու լուսամուտներով: Տունը 19-րդ դարի վերջին կառուցել է Ակսել Բակունցի խոհեմ հայրը՝ Ստեփան Թեոսի Բակունցը:

Ծանոթանում եմ թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանի, աշխատակցուհիներ Անժելա Միքայելյանի, Անահիտ Հարությունյանի, Լարիսա Սարգսյանի հետ:

Ավարտվել է հերթական էքսկուրսիան: Այցելուները մոտենում, երախտիքի անկեղծ խոսքեր են ասում աշխատակիցներին՝ սիրելի գրողի կյանքի ու գործունեության մասին նոր, հարուստ ու հանգամանալի տեղեկություն ստանալու համար: Այցելուներից ճանաչում, ողջունում եմ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Վարդանյանին, ում հայրենի թալիսի նշանավոր Աշխատում («Դու ծանոթ ես Աշխատում գյուղին, / Ուր ծիրանն է հասնում ճյուղին...», Գ. Եմին, «Սասունցիների պարը»), մենք ընդհանուր շատ ընկերներ ու բարեկամներ ունենք: Նա տիկնոջ հետ է երեւանից Գորիս եկել, եւ պարզապես հաճելի է իմանալ, որ նրանք էլ են բակունցապաշտներ...

Վարդան Սարգսյանն է ինձ առաջնորդում թանգարան: Նրանից տեղեկանում եմ, որ մշակութային այս օջախը 1970թ. բացվել է կայացել է տեղական իշխանությունների ջերմագին հոգածության շնորհիվ, իսկ 1976-ից՝ դարձել էրեւանի Ե. Զարեհի անվան արվեստի եւ գրականության թանգարանի մասնաճյուղ: Հետագայում գրողի ծննդյան բարեառիք հորեյանների՝ 90 եւ 105-ամյակների կապակցությամբ, այն հիմնովին նորոգվել ու բարեկարգվել է՝ վերափոխվելով հուշահամալիրի: Գուլելի է եւ սրտացավ վերաբերմունքը՝

անխաթար պահպանվել են տան բնօրինակ ճակատը եւ, ընդհանրապես, նրա ճարտարապետական կերպը գրեթե այնպես, ինչպես Բակունցի բնակության ժամանակ էր: Բակունցների տունը գրավիչ ու ակնհաս ընդհանուր պարզությամբ, ինչն այցելուներին հնարավորություն է ընձեռում լավագույնս պատկերացնելու զանգեզուրյան հայկական օջախի կենդանի կյանքն ու կենցաղը:

Տնօրենը գործիմացորեն, սիրով ու արժանի հպարտությամբ է ներկայացնում թանգարանը: Անցնում ենք բոլոր չորս սրահներով, ծանոթանում հարուստ ու բազմաբովանդակ ցուցանմուշներին: Դրանք տան հնաճ կահույքը, գրողի անձնական իրերն են, գրքերը, տետրերն ու փաստաթղթերը, ժամանակի պարբերական մամուլում հրատարակված նյութերը՝ գրական եւ մասնագիտական (ճիշտն ասած, թող ինձ ներվի, հոգուս խորքում ափսոսանք եմ զգում, որ մեր արձակի անզուգական Վարդապետը, մասնագիտության եւ աշխատանքի բերումով, թանկագին ժամանակ է վատնել բազմաթիվ գյուղատնտեսական թեմաներով հողմածների, ուղեցույցների ու գրքույկների վրա...):

Գրողի նկարանում նրա մահճակալն է, հագուստը, աշխատասեղանն ու աթոռը, մայրիկի գործած գունագեղ գորգերից: Հարեւակցությամբ նաեւ փոքրիկ խոհանոց կա եւ թոնիր, որտեղ հոգատար, անխոնջ Բոխազյուլ



մայրիկը լավաչ է թխել, հեսը մեջը համով բաղարջ ու գաթա...

Հաջորդ սրահի պատին «Ակսել Բակունցի մոր դիմանկարը» յուղաներկ աշխատանքն է, որի հեղինակը մեծն Մարտիրոս Սարյանն է: Կտավից՝ Վարդապետի հավերժացած անթարթ հայացքով նայում է Բոխազյուլ մայրիկը: Այստեղ անհրաժեշտ փոքրիկ նախապատմություն.

1935թ. ամռանը նկարիչ ընկերների հետ Գորիս է գալիս Մ. Սարյանը եւ իր պարտքն է համարում անապայման այցելելու Ակսել Բակունցին:

– Ակսելի հրճվանքին չափ ու սահման չկար, – գրում է Վահան Բակունցը: – Նրանք երկարատես ուրախ գրուցում են:

– Այստեղ ինչ-որ կարոտ էր առաջացել գույների ու խոսքի մեծ Վարդապետների միջեւ, – դիպուկ նկատում է Վ. Բակունցը:

Եվ Վահան Բակունցը, եւ՝ Մարիամ Ասլամազյանն ակնատես են եղել նկարի կերտմանը: Իրենց հուշագրություններում նրանք հաճույքով են պատմում այդ եղելությունը: Վ. Բակունցն իր «Մեծ հույզերի սերմնացանը» գրքում հիշում է, որ Մ. Սարյանը Գորիս էր եկել նկարելու «Ինքնատիպ ու գեղեցիկ բնույթները»: Գորիսով հիացած Վարդապետին արդեն հասկանալի է դառնում, «թե որտեղից են Ակսելի սքանչելի սյուժեները... Այդ բոլորը Գորիսի անմասն բնությունն է նվիրել նրան»:

Մարիամ Ասլամազյանն էլ «Կյանքիս դավթար»-ում հիշատակում է. «Ակսելը Սարյանին հրավիրեց իր տանն ապրելու եւ ստեղծագործելու: Այս ընթացքում Մարտիրոս Սերգեյիչը նկարեց Ա. Բակունցի մայրիկի դիմանկարը եւ

նվիրեց նրան»: Ակսելը երեխայի պես ուրախացել էր նկարի համար: Նա հիացմունքով մորն ասում էր. «Դու գիտե՞ս, թե ո՞վ է նկարել թո դիմանկարը: Մենք բոլորս էլ կիեռանաք այս աշխարհից, իսկ այս նկարը կմնա հավերժ»:

Այստեղ արժե մեջբերել նաեւ Վահան Բակունցի հիշատակած այն դրվագը, թե ամուսնացած մայրն ինչքան է նեղվել նկարվելիս: Նա հետո գանգատվել է, որ իրեն անշարժ «մին ժամից ավել էր մարդը նստացրել ա չոր աթոռին, թա պատկերը բաշում եմ: Հոգիս տոյուս եկավ, համուրթից բիչ էր մտում տափը ճղվել, մեջը մտնեմ: Բա կնիկարմատը եղբան վախտ խալխի տղամարդու երեսին կեշի՞»:

Երախտագետ Մարիամ Ասլամազյանն էլ է բարի հիշատակ թողել տուն-թանգարանին, ասել է թե՛ բակունցների հյուրընկալ օջախին:

Նկարչուհին, ի սեր անմոռաց ընկերոջ՝ Ակսելի, հետագայում պատկերել է նրան սիրելի մայրիկի հետ՝ Գորիսի երկնամուխ, արեւառ ժայռերի ֆոնին: Հիմա թանգարանին մի առանձնակի շուք ու հմայք է տալիս այս բազմախոսուն հոյակապ յուղաներկ կտավը:

Կանգ ենք առնում ցուցանակի պատին փակցված մի հնօրյա փաստաթղթի առջեւ եւ ուշադիր ընթերցում եմ:

Դարձյալ փոքրիկ ծանոթագրություն. Ակսել Բակունցի կենսագրության հայտնի փաստ է, որ 1910թ. մայիսին նա բարձր առաջադիմությամբ ավարտում է Գորիսի հեգամյա ծխական դպրոցը: Ճակատագրորեն բախտորոշ է լինում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի առաջադեմ սան, ազգակից Երեմիա Բակունցի խորհուրդն Ալեքսանդրին՝ ուսումը շարունակելու հեղինակավոր նույն կրթօջախում՝ ճեմարանում: Գործը հաջող ընթացք է ունենում. մի մեծ խումբ համախոհ, մտավոր գորիսցիներ «ԽՈՒՆԱՐՀ ԽՆԴԻՐ»-ով եւ «որդիական վստահությամբ» դիմում են հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Մաթեոս Բ-ին՝ «Ձեր հայրական խնամքը վայելող ճեմարանի գիշերօթիկ սաների շարքում ընդունելու տեղույս ծխական դպրոցը ամենազովելի ու առանձնահատուկ ընդունակությամբ ավարտած Ալեքսանդր Ստեփանի Թեոսյան Բակունցին»: «Առ որ մասնք Ձերը Սրբազան Օծույթյան Սրբազնագույն աջը համբուրող ամենախոնարհ որդիք: 1910թ. 10-ն օգոստոսի, բար. Գորիս»:

Խնդագրի վերջում հերթով ստորագրել են 152 մարդ: Այսպիսով, բարի կամքի տեր արժանապատիվ այդ մարդիկ, տաղանդավոր, օժտված պատանու առջեւ բացեցին լույսի ու լուսավորության նախադուռը՝ ժամանակի հետ գիտության դժվարավերելք, բարձրագույն աստիճաններով ելնելու ... հայ արձակի գագաթը...

Դրսում, արեւոտ պատին հենած ցանցավանդակներում, գանազան թռչուններ են պահվում: Դրանցից ամենաշքեղը, իհարկե, փասիանն է՝ միրիավը՝ իբրեւ կենդանի խորհրդանիշ Ակսել Բակունցի անմահ «Միրիավի»: Խորհրդանշական է եւ այն իրողությունը, որ տուն-թանգարանին կից գործող գրական ակումբը նույնպես «Միրիավ» անունն ունի: Այստեղ հանրության համար պարբերաբար կազմակերպվում են գրական-երաժշտական միջոցառումներ, ընթերցումներ, գրքերի շնորհակցաններ, ավելի խորությամբ է ուսումնասիրվում Բակունցի գրական ժառանգությունը, անդրադարձումներ կատարվում Հայաստանի գրական եւ մշակութային կյանքին:

Իջնում ենք ներքնահարկ: Այստեղ Բակունցի ընտանիքի մառանն է, հացատունը եւ խոհանոցը՝ մեծ թոնիրով, առաստաղից չորս լարով կախված՝ դարս-դարս լավաշի տախտակամածով, հնաճ կոմոդով, մեծ ու փոքր կճուճներով, կուժ ու կուկայով, պղնձե, փայտյա եւ խեցեղեն կենցաղային իրերով:

Այցելել եմ նաեւ Վահան Տերյանի եւ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան դարձած հայրական օջախները: Ճշմարիտ է՝ բուրն էլ հայկական-հայաշունչ են, սակայն առաջինում Չավախքին, մյուսում՝ Լոռուն, իսկ այստեղ Չանգեզուրին բնորոշ իրերն ու կենցաղավարությունն են՝ նկատելի զանազանություններով: Եվ դա բնական է. չէ՞ որ Դասմահայր Խորենացու համար Հայաստանի ամեն երկրամաս մի ... աշխարհ էր ...

Հուշահամալիրի ուշագրավ մաս են բազալտյա **ժանեկազարդ** խաչքար-շատրվանը՝ ցայտաղբյուրով եւ ճառագեղանի վրա արված բանդակներով: Հատկանշական է, որ ժամանակին Ակսել Բակունցի ձեռքով տնկված թթենին եւ երկու ընկու-

# Սյունեցի հանրապետականները, որ 2018-ի գարնանը գլխակորույս փախչում էին ՅՅԿ-ից, հիմա փորձում են հարություն առնել «նոր» դրոշով՝ խմբապետ կարգելով Թուրք անունով երբեմնի մարզպետին

**Ս**եր երկրամասում գործող հայտնի թայֆան՝ «Սյունիքի վրա» (ինչպես հայտարարվում է) եւ ոչ թե Սյունիքի համար, փորձում է իրավական-քաղաքական յափնջի գցել իր տկար ուսերին...

Հիմնադիրները կամ գլխավոր շահառուներն ունեն ընդհանուր եւ ընդգծված հետաքրքրություններ, նաեւ մտահոգություններ...

Ովքե՞ր են նրանք:

Երկար ժամանակ իշխող քաղաքական ուժի՝ ՅՅԿ-ի տեղական կառույցների ղեկավարն էին: Եվ ՅՅԿ-ի տեղական կառույցների ղեկավար դառնալու համար մեծ ծախսեր էին արել ժամանակին:

**Իսկ 2018-ի մայիսից հետո...**

Առաջինն էին Սյունիքում, որ ողջունեցին Լիկոլի հաղթանակը եւ պատրաստակամություն հայտնեցին ծառայել նրա քաղաքական թիմին՝ թեթևով այն աղյուսի վրա, որից տարիներ շարունակ ջուր էին խմել, որի գրությունը փողատեր էին դարձել, որն (ի վերջո) ապականել էին ու այդ կուսակցությունը դարձրել մերժելի:

Այնուհետև՝ տեսական ժամանակ փորձեցին ինտեգրվել նոր իշխանություններին, բայց մերժվեցին:

Յետո՞ւ պարբերաբար (ըստ մամուլի հրապարակումների), գումարներ մուծեցին ԱՆՆԱՅԻ հիմնադրամին՝ օրվա իշխանության ներողամտությանը եւ ժպիտին արժանանալու համար. նորից մնացին անտեսված ու արհամարհված:

Յետո առերեսույթ ախպերության ուժստ կնքեցին՝ համատեղ ուժերով ինքնապաշտպանվելու համար, բայց դա ավելի շատ համախմբման տեսիլք էր. նրանցից առնվազն երկու հոգի՝ ախպերությունից թաքուն, պայքար սկսեցին Սյունիքի մարզպետի պառնի համար, երբ այն թափուր մնաց Յունաս Պողոսյանի հեռանալուց հետո. ձախողվեցին կրկին:

Տեսնելով, որ չի ստացվում տեղավորվել գործող իշխանության հովհարի ներքո, որոշեցին նորովի միավորվել՝ իրենց ունեցվածքը (նաեւ պատերազմի ընթացքում ձեռք բերված) պաշտպանելու համար: Ու վճռական քայլերի դիմեցին՝ սեփական կարելիությունները ցուցանելու մարտավարությամբ, այն էլ՝ «հայրենասիրական» կարգախոսներով: Հատկապես ուշագրավ էր Սյունիք այցելող Լիկոլի ճանապարհը Շինուհայրի խաչմերուկում արգելափակելը, որն իրականացվեց հանքագործների գետնույցից երթն ավտոբուսով բերված վարձկաններով (ավտոմայրուղու արգելափակման ակցիան վերագրվեց Գորիսին. ինչ-որ մեկին հերոսացնելու խնդիր էր դրված նաեւ):

Դա էլ գործնական ազդեցություն չունեցավ սյունիքյան տրամադրությունների վրա, թեեւ ամենին զուգահեռ (դեռես պատերազմական օրերից) մայրաքաղաքային հայտ-



նի լուսավորչությունը գործի էին դրել այդ մարդկանցից մեկ-երկուսին «Լժոճե» անունը ստանձնելու փորձեցիությունն ու հնարքների շարքը, ինչի շնորհիվ (բուլեղիկյան ջանադրությամբ) պղծվեց հայոց այդ մեծի փառահեղ անունը:

**Եվ ի՞նչ առաքելությամբ կամ նպատակով են այդ հին-նորերը Սյունիքում բացարձակ իշխանություն ստեղծում:**

Դա էլ հանրահայտ է...

Ճիշտ է, Լիկոլն ու իր թիմն ուրացան Սյունիքն ու սյունիքյան սրբությունները, մեր նախնիների թողած ժառանգությունը, անգամ եղբայրություն արեցին այստեղ ներդրված հայտնի ավագակախմբի հետ, բայց... Հին-նորերն էլ (պարզվում է) չեն գալիս իրավիճակ փոխելու եւ այդ ամենին հակադրվելու: Գալիս են թալանավոր-կեղծավոր Սյունիքից իրենց փայլ թոնգնելու, գործող ասպատակախմբին քաղաքական ու սոցիալական հեռարան դառնալու համար: Գալիս են ճակատագրական այս օրերին մեր դժբախտությունների վրա ձեռքեր տաքացնելով, մեր դժվարությունները շահարկող հարպ-հորոցով, Սյունիքը երիցս բաժան-բաժան անելու ցինկով...

Անշուշտ, կարելի է ենթադրել, թե ինչ նոր քայլեր են այդ ամենին հաջողելու, բայց կա մեկ ուրիշ եւ թաքուր հարց նույնպես. ինչո՞ւ «նորացվող» թայֆան իրեն խմբապետ է կարգել Թուրք անունով նախկին մարզպետին, որի կիսագրագետ ու ողորմելի, նաեւ դեգրադացված վիճակի մասին նույնիսկ նրա մերձավորներն են շուրջիս անում:

Նախ՝ այդ ստահակն ամենակարճ կամուրջն է, որի օգնությամբ թայֆայի հիմնադիրներն ու գլխավոր շահառուները կարող են շատ թե քիչ փայ ստանալ սյունիքյան ընդերքի թալանից:

Այնուհետև՝ այդ խեղճատակն այն ավագակախմբի մեջ է, որի հետ, որքան էլ զարմանալի է, հարազատություն են անում եւ երեկվա, եւ այսօրվա բարձր իշխանավորները: Ասել է թե՛ իրավիճակի ցանկացած զարգացման դեպքում լծե կուսակցականներն առնվազն կմասն ջրի երեսին (եթե նույնիսկ երազած «կոմֆորտը» չստանան):

Հավանաբար դիտել եք «Չանգեզուր» ֆիլմը եւ հիշում եք Տիգրան դայան, որի մի գրպանում սպիտակ գլխարկն էր, մյուսում՝ կարմիր... Ահա այդպիսի Էլզոտիկ իրավիճակի հետ գործ ունենք նաեւ այս դեպքում:

Սյուն կողմից՝ արդեն իսկ հռչակված խմբապետը պատրաստ է թայֆայի շարքերը մեծացնելու համար լուրջ գումարներ ներդնել՝ նախ՝ ինքն իրեն սյունիքյան աղբանոցից դուրս բերելու, ապա Սյունիքի կողոպուտի անվտանգ ընթացքն ապահովելու համար:

Այդ խմբապետի երկերեսանությունն ու թծնվելու հանճարն անմրցելի են: Մի օրինակ՝ ահավասիկ. ակասատեսները պատմում են, թե 2018-ի հուլիսի 5-ի երեկոյան հայտնի պրոֆիլակտորիայում Լիկոլի պատմվին կազմակերպած ընթերցանությանը ինչպես էր երբեմնի ՅՅԿ-ական մարզպետը (մատուցողի դեր ստանձնած) վարչապետին պիցցա հյուրասիրում՝ մի քանի անգամ աղերսաձայն ասելով, որ իրենք են պատրաստել, տնական է, լավն է... Բայց երբ Լիկոլին ախորժեղի չի եղել պիցցան ու խնդրել է սեղանից հեռացնել այդ ուտեստը, Թուրքը մի քանի անգամ բարձրաձայնել է՝ «Սյունիքը ձեզ հետ է, մեծարգո պարոն վարչապետ...»:

Եվ ուրեմն՝ եթե իսկապես հանուն Սյունիքի քաղաքական ուժ պիտի ձեւավորվի, ապա ինչո՞ւ նրա առաջնորդը չպետք է լինի սյունեցի. այստեղ այնքան կայացած լիդերներ կան՝ ազգային մտածելակերպով, վերլուսական-

կան-վերթայֆայական պահվածքով, որոնց ներկայությամբ այդ արարածը նույնիսկ դռնապանի կարգավիճակ չի կարող ունենալ:

Իսկ թե ինչո՞ւ են որոշ սյունեցիներ (այդուհանդերձ) գետնաբարձությամբ հետեւում այդ ստրուկին՝ կներկայացնենք մեկ ուրիշ անգամ: Նրանց անունները մեկ առ մեկ եւ անպայմանորեն կիրառարկենք. գալիք սերունդները պետք է իմանան, թե ովքեր են 2021 թվականին Սյունիքում շարունակել դաչաղ Փանահի, Ֆայթ-ալի խանի, Մելիք Ֆրանգուլի, Նուրի փաշա դահիճի կիսատ թողած գործերը...

Առայժմ մի բան է ստույգ, որը եւ արձանագրում ենք՝ այն, ինչ որ վերջին շրջանում հայտնի թայֆան կատարում է Սյունիքում՝ համահունչ է ազգերի սյունիքյան նկրտումներին, բանգի կշեռքի մի նժարին իրական Սյունիքն է՝ իր շահերով, մտահոգություններով ու տագնապներով, մյուս նժարին՝ Թուրք անունով խմբապետն ու Սյունիքը կեղծելու անթաքնաց ծրագրերն են: Մի նժարին Սյունիքը սյունեցիներին, Հայաստան պետությանը վերադարձնելու երազանքն է, մյուս նժարին՝ Սյունիքն անհայտ ծագումով ու ազգությամբ ինչ-որ մարդկանց կեղտոտ ոտքերի տակ փռելու մոլագարությունը: Ուրիշ իրականություն չկա...

**Հ.Գ. Ի դեպ, Սյունիքում հիշում են, որ ՅՅԿ հիմնադիրը մեր լեռնաշխարհի հրաշալի գավակ Աշոտ Նավասարդյանն էր: Նրանով միևնույն հիմա հպարտանում են Սյունիքում. իսկական ազգային կերպար էր՝ փառահեղ ներկայություն:**

*Հանրապետական կուսակցության գաղափարախոսությունն էլ սյունիքյան-նժոճեյան էր ի սկզբանե, ինչպիսիք սյունեցիները նույնպես, ովքեր որական հետք են թողել մեր երկրամասում եւ խանդաղատանքով են հիշվում մինչեւ էլ ներք:*

*Այդ կուսակցության շարքերում, էն գլխից, եղել են այլ նշանավոր սյունեցիներ նույնպես, ովքեր որական հետք են թողել մեր երկրամասում եւ խանդաղատանքով են հիշվում մինչեւ էլ ներք:*

*Սակայն 2014-ին երկրի բարձրագույն դեկլարությունը Սյունիք գործուղեց պրոֆեսիոնալ ջեբկիրների մի խումբ, որից հետո պղծվեց Լժոճեի հիշատակը, փշուր-փշուր եղավ հավատն այդ կուսակցության ու հայոց պետականության հանդեպ առհասարակ: Իմիջիպայոց, ՅՅԿ-ի ներկայացուցիչները, որ այդ ժամանակ երկրի ղեկին էին, միևնույն հիմա ներողություն չեն հայցել սյունեցիներից այդ ամենի համար:*

*ՅՅԿ-ն, այդ բոլորով հանդերձ, Սյունիքում կողմակիցներ ունենալու շանտեր ունի, եթե... Եթե անկեղծանա ու պատասխանի՝ արդյո՞ք իր քաջալերանքով կամ իր հովանու ներքո է Սյունիքում դասայիք հանրապետականներից՝ հայտնի թայֆայի գերիշխանությամբ, ինչ-որ «քաղաքական» ուժ ձեւավորելու միտված վարձանքներ մեկնարկել...*

Վեցին, մոտ 80-90 տարի մարդկանց առատ պտուղներ շոյելուց հետո, երբ ծերացան ու չորացան, գորիսեցի շնորհաշատ նկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը դրանց հաստաբուն բնափայտը կերպավորեց իբրեւ բակունցյան գրական հերոսներ՝ Սոնա («Միրհավ»), Արթին պապ («Նամակ ռուսաց թագավորին») եւ գրողի մայրիկին՝ գանգեզուրյան գլխակապով:

Քայլում ենք այդու բարձր ծառերի եւ վարդենիների միջով: Ութերես գետնին են դնում մի տեսակ երկուրածորեն, ավելի հուզումնալի... Կարող լիդերները ունի այս այգին, ուր մեծն Բակունցի հեռավոր ոտնահետքերն են... Այգին փթթում է կանաչ շնչով ու արեա-համ պտուղներ տալիս: Թանգարանի տնօրենին խնդրում են ցույց տալ բաղադրանքի այն ծառը, որի զովասուն սաղարթների սովե-րում փռված կարպետների ու գորգերի վրա հանգստացել է Բակունցը, պարապել ժա-

մերով ու գրել, հաճախ էլ՝ խնջույքներ արել: Ահավասիկ, հիշատակման արժանի մի քանի պերճախոս տողեր Մ. Ավանազյանի «Կյանքիս դավթար»-ից.

*«Մի անգամ Գիշուրը (Բակունցի փոքր եղբայրը-Ս. Մ.) եկավ մեզ մոտ սովորականից շուտ: Ակսելն էր ասել, որ թողնենք ամեն ինչ եւ շտապենք նրա մոտ: Բակ մտնելով՝ բոլորս մնացինք գարնացած. ջրոս կողմը հյուրեր: Սեղանի գլխամասում Ակսելն էր. նա թամա-դա էր: Մոտեցավ մեզ եւ ասաց. «Ես կատարում եմ Շիրվանի պատգամը: Նա ինձ պարտավորեցրել է, որ իր մահվան օրը մեծ սեղան գցեմ, հրավիրեմ նրանց, ում ես կցանկանամ, ինքս լինեմ թամադա ու բեֆ անենք եւ հիշենք նրան առանց տխուր խոսքերի՝ որպես ընկերոջ եւ գրող Ալեքսանդր Շիրվանզադեի: Այսօր առավոտյան ես հենազիր ստացա եւ հիմա կատարում եմ հանգուցալի կամքը»: Այդ երեկը Ակսելը ավելի սրամիտ ու նրբախոս էր,*

*երկար պատմում էր իր ու Շիրվանի հանդիպումների եւ արկածների մասին»:*

Վ. Սարգսյանն ասաց, որ, ցավոք սրտի, այլեւս չկա այդ «պատմական» տանձենին, սակայն «մի հուսադրող փաստ. նախկին ծառի դեռես կենսունակ արմատից ահա այս դալար շիվն է աճում, եւ մենք հատուկ խնամք կտանենք, որպեսզի աճի, կրկին մեծ տանձենի դառնա»: Ձեռնահաս տնօրենը տնկարան է հիմնել, որով շարունակաբար կազմվացնի, կերիտասարդացնի այս նշանավոր այգին: (Ես էլ, ի դեպ, խոստացա Աշտարակի իմ այգուց այստեղ հասցնել արտասովոր խոշոր պտուղներ տվող ընկուզենու տունկ, որի «հայրը», ասում են, սերում է Հոկոստանի նախկին պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդիի նստավայրի այգուց...):

...Արեւը դեպի մայրամուտ է թեքվում: Ես տուն-թանգարանին եմ հանձնում բերածս նկարը:

Այգու տաղավարում եղավ հյուրասիրություն: Թարմ լավաշ, ընկույզ ու ծաղկաբույր մեղր, մրգեր... Հյուրերը խնձորների «հեղինակն» էլ է Բակունցը: 1920-ականների կեսին գյուղատնտես Ալեքսանդր Բակունցի ներմուծած ծառերի «ժառանգներից են», որոնք պատվաստի եղանակով վարուց ի վեր տարածվել են Գորիսում եւ շրջակայքում:

Թեյ են մատուցում Բակունցի ընտանիքի մեծ ինքնաշոքից: Բուրավետ է, բանգի Գուսան Աշոտի գովերգած «ծաղկավառ Չանգեզուրի հազար տեսակ վարդերից» ու լեռնային թեյախոտերից է «առել սնունդ»:

Ես շնորհակալություն եմ հայտնում եւ հրաժեշտ տալիս մեծն Ակսել Բակունցի հիշատակը վառ պահող նվիրյալ աշխատակազմին: Հրաժեշտ են տալիս եւ Ակսել Բակունցի նորոթյա ոգեղեն, հայաշունչ օջախին ու բռնում վերադարձի ճանապարհը:

## ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2021/2022 ՈՒՏԱՐԿԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԴԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ



**ՍԻՐԵԼԻ ԴԻՄՈՐԴ**  
Գորիսի պետական համալսարանը հայտարարում է 2021-2022 ուստարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ընդունելություն: Դիմորդները կենտրոնացված, ներբուհական և առաջին փուլի միասնական քննություններին մասնակցելու, ընտ-

րած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտերը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գնահատման և թեստավորման կենտրոն են ներկայացնում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **dimord.am** կայքում **ապրիլի 15-ից մայիսի 10-ը՝ մինչև ժամը 18:00-ն ներառյալ:**  
Ընդունելության կարգին մանրամասն ծանոթանալու համար անցնել հետևյալ

հղումով. <http://escs.am/am/static/appl-cant?s=edu>:  
Ընդունելությանը վերաբերող ցանկացած հարցով խորհրդատվություն ստանալու համար կարող եք գրել Գորիսի պետական համալսարանի էլեկտրոնային փոստի հասցեին՝ [gorissu@mail.ru](mailto:gorissu@mail.ru), այցելել ԳՊՀ պաշտոնական կայքէջ՝ [www.gorssu.am](http://www.gorssu.am), ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/GorisSU> կամ այցելել ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2 հասցեով՝

պահպանելով սահմանափակ համաճարակային անվտանգության կանոնները:  
ԳՊՀ ընդունող հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի պատասխանատու քարտուղար՝ Ա. Գալստյան, հեռ.՝ (098) 19 67 14, (077) 22 57 27, էլ. հասցե՝ [g.anigalstyan@gmail.com](mailto:g.anigalstyan@gmail.com)

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, Կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			Ընդունելության տեղ/ այդ թվում		Ուսման վարձը (հազ. դրամ)
		Մրցութային	Ոչ մրցութային	անվճար	վճարովի US		
Մասնագիտական Մանկավարժություն 011401.00.6	Կենսաբանություն / 011401.01.6	Կ (գ)	Ք(գ)** կամ Ֆ (գ)**	Հիգ*	2	12	310
	Պատմություն / 011401.18.6	ՀՊ (գ)	Օտլ (գ) կամ ԸՊ(գ)	Հիգ*	1	20	350
	Հայոց լեզու և գրականություն / 011401.19.6	Հիգ (գ)	Հիգ (բ)		2	20	350
	Անգլերեն լեզու և գրականություն / 011401.21.6	Անգլ (գ)	Անգլ (բ)	Հիգ*	2	18	400
	Կերպարվեստ / 011401.11.6	Գծն	Գն	Հիգ*	1	20	350
Ընդհանուր մանկավարժություն 011301.00.6	Տարր. մանկավարժություն և մեթոդիկա / 011301.01.6	Հիգ (գ)	Մ(գ)**		2	23	410
Տնտեսագիտություն / 031101.00.6	Տնտեսագիտություն / 031101.01.6	Մ(գ)	Հիգ (գ)	Օտլ*	1	30	420
Կառավարում / 041301.00.6	Կառավարում (ըստ ոլորտի) 041301.01.6	Մ(գ)	Հիգ (գ)	Օտլ*	1	23	420
Էլեկտրոնիկա / 071401.00.6	Էլեկտրոնիկա / 071401.01.6	Մ(գ)	Ֆ(գ)**	Հիգ*	3	17	320
Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) / 061101.00.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա / 061101.02.6	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Անգլ (գ)**	Հիգ*	3	15	390

\* Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջևակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից, լրացնելով այդ առարկայի պետական ավարտական քննության գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում տարեկան գնահատականը:  
\*\* Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջնապալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջևակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

**ԿՈՐԵԼ Է** // Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանի Կերիշենի Խ.Ա.Երիցյանի անվան սովխոզ-տեխնիկումի 1981 թ. շրջանավարտ Մարտտա Արկադիի Բարսեղյանի դիպլոմը՝ BTN010807, գրանցման համար՝ 6179, (27 հունիսի 1981 թ.): Համարել անվավեր:

**ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ** // Խորին երախտագիտությունս եմ հայտնում Վ.Ա.Ֆանարյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի թոքային վիրաբուժության բաժանմունքի վարիչ Արմեն Խանոյանին, բուժող բժիշկ Սերգեյ Աբրահամյանին, ավագ բուժքույր Լավինա Ադամյանին՝ մարդկային ջերմ վերաբերմունքի և մասնագիտական բարձր որակների համար, ինչի շնորհիվ վերականգնվեց իմ առողջությունը:  
**Միշա Հովսեփյան, Կապան քաղաքի բնակիչ**

**«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿՐԻ» ՏԱՐԵԿԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
Համաձայն «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի 2020 թ. ֆինանսական հաշվետվությունը (ՀՀ դրամ):  
**Համախառն եկամուտ՝ .....13 432 687**  
Այդ թվում՝  
Նվիրատվություն՝ ..... 1 564 134  
Սուբսիդիա՝ ..... 0  
Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝ .... 554 000

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ



### ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- ▶ Մարզի տնտեսության կարիքները և հասարակության կրթական պահանջմունքները բավարարող ճարտարագիտական կրթության ապահովումը,
- ▶ տարածաշրջանում խոշոր տեխնոլոգիական կենտրոն դառնալը,
- ▶ մարզի տնտեսությունը բարձրորակ ճարտարագետներով և արտադրության կառավարիչներով ապահովելը,
- ▶ տարածաշրջանի գիտատեխնիկական ներուժի հզորացմանը նպաստելը:

### ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տեղեկատվական համակարգեր**
- Օգտակար հանածոների հարստացում**
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ**
- Շինարարություն**
- Տնտեսագիտություն**
- Մետալուրգիա**
- Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում**

📍 **Ե.ԿԱՊԱՆ, ԲԱՂԱԲԵՐԴ 28** ☎ **(0285) 5 46 80 , (0285) 5 34 61**  
 🌐 **www.haphkapan.com** 📧 **baghaberd@seua.am**

**Սյունյաց երկիր**  
ՀԻՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԳՐԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

☎ 3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
 ☎ (+374 285) 5 25 63  
 ☎ (+374 91) 45 90 47  
 ☎ (+374 77) 45 90 47  
 ✉ [syuniacyerkir@mail.ru](mailto:syuniacyerkir@mail.ru)  
 🌐 [www.syuniacyerkir.am](http://www.syuniacyerkir.am)

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհանդնակել: Կյուրերը ներկայացնելու մեթոդագիր վիճակում:  
 «ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուրերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
 Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է: © Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուրեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
 Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրական թիվ՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.04.2021թ.: